

ԳԻՒԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ**ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ****Տ. ՄԻՈՆ ԱՐԵՂԱՅ ԹԱՔՈՒՇԵԱՆԻ**

Աւագանի անունով Գրիգոր, ծնած է 12 Յունուար, 1999-ին, Երեւան, Հայաստան: Զաւակն է Յարութիւն եւ Բելա Թաքուշեաններու:

2002-2005 թթ. յաճախած է Երեւանի «Ինչուիկ» քոլէճ-նախակրթարան:

2005-2013 թթ. հիմնական կրթութիւնը ստացած է Երեւանի Ն. Վ. Գոգոլի անուան թիւ 35 հիմնական դպրոցին մէջ՝ գերազանց առաջադիմութեամբ: Աշակերտութեան ընթացքին մասնակցած է զանազան ոլիմպիատաներու, «Հայ Ասպետ» հեռուստատեսային մրցախաղին եւ ուսողութեան միջազգային «Կանգունութիւն» մրցոյթին:

2013-2016 թթ. ուսանած եւ աւարտած է Երեւանի Գր. Զօհրապի անուան թիւ 43 Աւագ դպրոցը՝ գերազանց առաջադիմութեամբ:

2016-ին ընդունուած եւ 2020-ին յաջողութեամբ աւարտած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարանը:

2018-ի Յունիս 15-ին, ձեռամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեանի ստացած է Դպրութեան չորս աստիճաններ, իսկ 2020-ի Հոկտեմբեր 28-ին՝ Ուրար կրելու իրաւունք:

2022-ի Յունիս 26-ին, Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի տօնին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ ձեռնադրուած է Սարկաւագ՝ ձեռամբ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեանի:

2022-2024 թթ. եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Դիւանի եւ «Վկայագրերու գրասենեակի» գլխաւոր քարտուղար:

2023-ի Յունիս 13-ին աւարտած է Ընծայարանի եռամեայ բաժինը: Նոյն թուականին միջեւ օրս Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան «Սիրոն» ամսագրի Գլխաւոր Խմբագրի օգնականն է:

2024-ի Օգոստոս 11-ին, ձեռամբ Լուսարարարապետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեանի ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Տ. Սիրոն Աբեղայ: